

ՀԱՆՔԱՀՈՒՄՔԻ ՌԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՔԱՆՈՒՄԸ

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ներկայումս, երբ աստիճանաբար աճում է օգտակար հանածոների ժողովրդատնտեսական պահանջարկը, հանքահումքային ռեսուրսների խնամքով և ռացիոնալ օգտագործումն առավել կարևոր նշանակություն է ստանում: Սակայն օգտակար հանածոների արդյունահանման ժամանակ դրանց զգալի մասը մնում է ընդերքում, շատ են թափոնները և կորուստները: Հարցի հրատապություն է պայմանավորված այն հանգամանքը, որ ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թթ. և մինչև 2000 թ. ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղություններում խնդիր է դրվել «հաստատակամորեն ձգտել ռեսուրսների բոլոր տեսակների ռացիոնալ և խնայողական ծախսմանը, դրանց կորուստների նվազեցմանը, արագացված կերպով անցում կատարել ռեսուրսախնայող և անթափոն տեխնոլոգիաների»¹:

Հանքահումքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման պրոբլեմի լուծման հիմնական ուղիներից մեկն ընդերքի օգտագործման կառավարման տնտեսական մեխանիզմի հետագա կատարելագործումն է: Այդ մեխանիզմում առանձնակի դեր է պատկանում հանքահումքային ռեսուրսների տնտեսական գնահատմանը, ընդերքում օգտակար հանածոների գնագոյացմանն ու հետախուզված պաշարների վճարելիությանը, ինչպես նաև պետության, երկրաբանահետախուզական կազմակերպությունների և հանքարդյունահանող ձեռնարկությունների միջև օգտակար հանածոների իրացումից ստացված շահույթի բաշխմանը և այլն: Հանքահումքային ռեսուրսների տնտեսական գնահատման և հանածո հումքի գնագոյացման բնագավառում տեղ գտած թերություններով է մասամբ բացատրվում այն փաստը, որ ներկայումս հանքարդյունաբերության առանձին ճյուղերում գործում են պլանային-վնասաբեր բազմաթիվ ձեռնարկություններ: Ապրանքադրամական հարաբերությունների և տնտեսաշվարկի պայմաններում վնասաբեր այդ ձեռնարկությունների առկայությունը բնավ էլ չի բխում համապետական շահերից և խոչընդոտում է ընդերքի ռացիոնալ օգտագործմանը:

Բնական, այդ թվում հանքահումքային ռեսուրսների տնտեսական (դրամական) գնահատման հարցերին նվիրված են բազմաթիվ աշխատություններ, որոնցում շարադրված են բնական ռեսուրսների տնտեսական գնահատման հիմնական սկզբունքներն ու մեթոդները²: Դրանց հեղինակները հիմնականում համակարծիք են այն հարցում, որ բնական ռեսուրսների տնտեսական գնահատման բացակայությունը ընդերքի գերազանցապես էքստենսիվ օգտագործման գլխավոր պատճառներից է: Սակայն տնտեսական գնահատման եղանակներն ու մեթոդներն ընտրելիս նրանց տեսակետները տարամիտվում են: Հայտնի է բնական (մասնավորապես՝ հանքահումքային) ռեսուրսների տնտեսական գնահատման երկու հիմնական մոտեցում. 1) «ծախսումնային», երբ տնտեսական գնահատումը հիմնվում է այդ ռեսուրսների հայտնաբերման, յուրացման

¹ «Սովետական Հայաստան», 9. III. 1986:

² Նշված հարցերի վերաբերյալ մեր երկրում առանձնակի հետաքրքրություն առաջացավ 1950-ական թվականների չորրորդ կեսերից, երբ բանավեճ ծավալվեց «Горный журнал» (1957—1959, 1983—1985), «Вопросы экономики» (1967—1969), «Разведка и охрана недр» (1974—1975), «Советская геология» (1979—1982) պարբերականներում:

ու շահագործման նախապատրաստելու համար հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի վրա՝ և 2) «ռենտային», երբ տնտեսական գնահատման հիմքում գրվում է կապիտալացված դիֆերենցիալ ռենտան⁴։

«Ծախսումնային» սկզբունքով հանքավայրերի տնտեսական գնահատման կողմնակիցները գտնում են, որ օգտակար հանածոների հանքավայրերն ունեն արժույթ, որի մեծությունը որոշվում է դրանց որոնման, հետախուզման և շահագործման նախապատրաստելու համար անհրաժեշտ աշխատանքային ծախսումների մեծությամբ։ Ընդ որում, այդ արժույթում առանձին հետադուրողներ հանձնարարում են հաշվի առնել նաև օգտակար հանածոյի պաշարների որակը, լեռնատեխնիկական և այլ պայմաններ բնութագրող տարբեր գործակիցները։ Ընդերքի ռեսուրսների գնահատման «ծախսումնային» մոտեցումը փաստորեն հանգում է երկրաբանահետախուզական աշխատանքների հասարակականորեն անհրաժեշտ ծախսումների որոշմանը։ Հասարակականորեն անհրաժեշտ այդ ծախսումները նրանք հանձնարարում են որոշել ոչ թե դրանց վերարտադրության, այլ փաստորեն մինչև այդ ծախսված աշխատանքի քանակով։ Ընդերքի տնտեսական գնահատման նպատակով նրանց կողմից հանձնարարվող օգտակար հանածոների հետախուզված պաշարների գինը նման է Ս. Ստրումիլինի առաջարկած հողի յուրացման գնին։ Վերջինիս կարծիքով, բնական ռեսուրսները երբեք չի կարելի «ծրի բարիք» անվանել։ Դրանք բոլորն էլ ձեռք են բերում իրենց յուրացման գինը, իսկ այդ գներն ամբողջովին որոշվում են այդպիսի բարիքների յուրացման ծախսերի հասարակական արժեքով⁵։ Երկու դեպքում էլ բնական ռեսուրսների գինը որոշվում է դրանց հայտնաբերման ու յուրացման ծախսերի աշխատանքային միջին գնահատման հիման վրա, որը բերում է արժեքի աշխատանքային մարքայան տեսությունից⁶։ «Ծախսումնային» մոտեցման դրական և բացասական կողմերը լայնորեն քննարկվել են տնտեսագիտական գրականության մեջ⁷։ Մանրամասն շանդրադառնալով դրանց, միայն նշենք, որ «ծախսումնային» գնահատման որոշակի թերություններով կարելի է բացատրել այն փաստը, որ որոշ հեղինակներ երկրաբանահետախուզական աշխատանքներն անարտադրողական են համարում⁸։ Նրանք դա մեկնաբանում են այն բանով, որ մեկ տոննա օգտակար հանածոյի հետախուզումը խոշոր և օգտակար հանածոյի հարուստ պարունակություն ունեցող հանքավայրում միշտ ավելի էժան է, քան փոքր և համեմատաբար աղքատ հանքավայրերում։

³ С. Г. Струмилин, К оценке «даровых благ» природы («Избранные произведения», т. I, М., 1963); Л. Д. Обломовская, Учет природного фактора, ценообразования в условиях технического прогресса («Экономические науки», 1971, № 1, с. 55—63); Е. А. Соловьева, Т. Н. Говард, Э. В. Митрис, Экономическая эффективность использования недр, М., 1980 и др.

⁴ Н. В. Володомов, Горная рента и принципы оценки месторождения, М., 1959; Н. П. Федоренко, Об экономической оценке природных ресурсов («Вопросы экономики», 1968, № 3); К. Г. Гофман, Экономическая оценка природных ресурсов в условиях социалистической экономики, М., 1977 и др.

⁵ С. Г. Струмилин, *ibid.*, т. I, с. 143.

⁶ Т. Хачатуров, Об экономической оценке природных ресурсов («Вопросы экономики», 1969, № 1, с. 66—74).

⁷ Е. А. Соловьева, Ценообразование и проблемы рационального использования недр, М., 1974; А. В. Томашевич, Экономическая оценка минеральных ресурсов Белоруссии, Минск, 1978; А. С. Астахов, Экономическая оценка запасов полезных ископаемых, М., 1981; Н. И. Цветков, Методы и модели экономической оценки месторождений минерального сырья в районах нового освоения, М., 1982 и др.

⁸ Ю. Пивенштейн, Экономическая природа геолого-разведочных работ («Вопросы экономики», 1975, № 3).

Բնական ռեսուրսների տնտեսական գնահատման «ռենտային» մոտեցման կողմնակիցները ելնում են նրանից, որ, պայմանավորված ընաշխարհագրական տեղադիրքով, որակական առանձնահատկություններով և բնական այլ գործոններով, այդ ռեսուրսներն օգտագործելիս աշխատանքի միևնույն ծախսումների դեպքում ստացվում են արտադրական տարբեր վերջնական արդյունքներ: Բարձրորակ հանքանյութ պարունակող հանքավայրեր շահագործելիս ցածրորակի համեմատ ստացվում է լրացուցիչ եկամուտ (դիֆերենցիալ ռենտա), որը հիմք է հանդիսանում բնական ռեսուրսների գնահատման համար: Չնայած «ռենտային» մոտեցման տրամաբանական հարցադրմանը, այն էական թերություն ունի⁹: Ճիշտ է, դիֆերենցիալ եկամուտը հանքավայրերի տրեստեսական գնահատման կարևոր ցուցանիշ է: Այն դրամական ձևով արտացոլում է հանքավայրի համեմատական արժույթը, ցույց է տալիս, թե որքան է մի հանքավայրից արդյունահանվող և օգտագործվող օգտակար հանածոն արդյունավետ մյուսից: Սակայն դա բնական ռեսուրսների գնահատման միակ չափանիշ համարել չի կարելի, քանի որ միշտ էլ կան համեմատաբար «վատագույն» բնական պայմաններ և տեղադիրք ունեցող հանքավայրեր, որոնցից արդյունահանվող օգտակար հանածոն անհրաժեշտ է հասարակական պահանջ-մուրը բավարարելու համար: Նման մոտեցման դեպքում այդ հանքավայրերը գնահատվում են զրոյական արժեքով, որն ակնհայտորեն սխալ է¹⁰: Մինչդեռ, հանքահումքային ռեսուրսների սահմանափակվածության պայմաններում դրանց նկատմամբ ժողովրդատնտեսական հարաճուն պահանջարկը բավարարելու համար հասարակությունը հարկադրված օգտագործում է նաև համեմատաբար ցածրորակ և անբարենպաստ տեղադիրքում գտնվող ռեսուրսներ: Հետևապես, հասարակությունը որոշակի լրացուցիչ ծախսեր է կատարում այդ «վատագույն» ռեսուրսներն արտադրական շրջանառության մեջ ներգրավելու համար: Իսկ հասարակականորեն անհրաժեշտ այդ ծախսումները չի կարելի անտեսել: Բացի այդ, հանքավայրերի տնտեսական գնահատման «ռենտային» մոտեցման դեպքում հաշվի չեն առնվում երկրաբանահետախուզական աշխատանքների վրա կատարված ծախսումները:

Տեսականորեն և մեթոդապես ուշադրության են արժանի բնական ռեսուրսների տնտեսական գնահատման «ծախսումային» և «ռենտային» մոտեցումները համադրելու փորձերը: Սակայն այդ ուղղությամբ մեթոդական կոնկրետ հարցադրումները միշտ չէ, որ հիմնավոր են, իսկ տնտեսական գնահատման առաջադրվող լուծումները՝ համոզիչ: Դրանցում կիրառվող առանձին տարրեր երբեմն պայմանական բնույթի են և հիմնավորված չեն, իսկ որոշ գործոններ էլ անտեսված են:

Հանքահումքային ռեսուրսների տնտեսական գնահատումը՝ կախված արդյունաբերական յուրացման աստիճանից, կարելի է ստորաբաժանել երկու փուլի՝ ա) օգտակար հանածոների հետախուզումից և արդյունաբերական յուրացմանը նախապատրաստելուց հետո դրանց տնտեսական գնահատում (որի հիման վրա կարելի է հետախուզված պաշարի գինը սահմանել) և բ) արդյունահանված օգտակար հանածոյի տնտեսական գնահատում (որի հիման վրա սահմանվում է ընդերքից արդյունահանված հումքի գինը):

Երկրաբանահետախուզական աշխատանքներն օգտակար հանածոների արդյունահանման սկզբնական փուլն են, որի արդյունքն ընդերքում հետախուզված պաշարներն են: Երկրաբանահետախուզական ծառայության աշխատողների կոնկրետ աշխատանքով ստեղծվում է սպառողական արժեք, իսկ արտարկատ աշխատանքով՝ արժեք: Երկրաբանահետախուզությունում արժեքի ձևավորման վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ հանդիպում են տարբեր

⁹ А. Б. Каждаи, Л. П. Кобахидзе, Геолого-экономическая оценка месторождений полезных ископаемых, М., 1985, с. 99.

¹⁰ Նույն տեղում:

տեսակետներ: Դրանց հեղինակների մի մասը հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքը համարում է վատագույն բնական պայմաններում գտնվող հանքավայրերում հայտնաբերված օգտակար հանածոների պաշարների որոնման և հետախուզման աշխատանքները, քանի որ այդ պաշարների սահմանափակվածությունն ու անվերարտագրելիությունը հարկադրում են որոնել ու հետախուզել ոչ միայն լավագույն, այլև միջին կամ վատագույն որակ ու տեղագիրք ունեցող հանքավայրեր¹¹: Նրանք եզրակացնում են հետևյալը. քանի որ վատագույն հանքավայրերի հայտնաբերման, հետախուզման և արդյունահանման ծախսումները հասարակականորեն անհրաժեշտ են, ուրեմն դրանք պետք է լինեն կարգավորող (հակառակ դեպքում երկրաբանահետախուզական ձեռնարկությունները տնտեսապես կբայթայվեն): Այստեղ շփոթություն է առաջանում. երկրաբանահետախուզական ծառայությունում և ընդերքից օգտակար հանածո արդյունահանող արդյունաբերությունում կատարվող աշխատանքները նույնացվում են:

Երկրաբանահետախուզությունում, ինչպես և արդյունաբերությունում արժեքը որոշվում է որոնման և հետախուզման հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի ծախսումներով: Ճշմարտամոտ են այն հեղինակները¹², որոնք կարծիքով օգտակար հանածոների գնահատման ժամանակ հարկավոր է ելնել հասարակության մասշտաբով որոնման և հետախուզման միջին ծախսերից, այլ ոչ թե փաստացի ծախսերից, ինչպես մատնանշում են որոշ մասնագետներ¹³: Երկրաբանահետախուզությունում հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի ծախսումներն ընդգրկում են ընդերքում տվյալ օգտակար հանածոյի մեկ տոննա պաշարի որոնման ու հետախուզման միջին ճյուղային ինքնարժեքը և երկրաբանահետախուզական կազմակերպության նորմատիվային շահույթը¹⁴:

Բնական (այդ թվում՝ հանքահումքային) ռեսուրսների անվճար օգտագործման գործող կարգն արտադրական ռեսուրսների մյուս տեսակների վճարելիության պայմաններում հանգեցնում է դրանց նկատմամբ անտնտեսավարության¹⁵: Ինչպես նկատել է ակադ. Տ. Խաչատուրովը ապրանքադրամական

¹¹ «Научные основы планового ценообразования (теория, методология)», под. ред. В. Н. Дяченко, М., 1968; Е. Л. Кантор, В. И. Назаров, Ценообразование в геологоразведочных работах на нефть и газ («Труды ВНИГРИ», вып. 297, Л., 1971, с. 148—158).

¹² Л. П. Кобахидзе, О цене разведанных запасов полезных ископаемых в недрах («Советская геология», 1970, № 2, с. 91—97); М. И. Агошков, В. А. Перваго, Н. А. Хрущев, Цена разведанных запасов полезных ископаемых («Разведка и охрана недр», 1974, № 5); Ю. В. Яковец, Методологические основы возмещения затрат на геологоразведочные работы в себестоимости и ценах полезных ископаемых («Методы возмещения затрат на геологоразведочные работы в оптовых ценах», М., 1974, с. 3—20); С. Я. Каганович, Экономика минерального сырья, М., 1975 и др.

¹³ Э. А. Азроянц, Экономика и хозяйственный механизм геологоразведочного производства, М., 1984.

¹⁴ Մենք համարիտ ենք այն հեղինակների հետ, ովքեր գտնում են, որ օգտակար հանածոների մարված պաշարները (ինչպես և ցանկացած արդյունաբերական արտադրանքի) պետք է երկրաբանահետախուզական ձեռնարկություններին շահույթի անհրաժեշտ ծավալ ապահովեն: տնտեսաշարժային նորմալ գործունեության համար (Н. А. Хрущев, Основные показатели экономической эффективности затрат на геологоразведочные работы и подход к определению цены разведочных запасов минерального сырья в недрах («Советская геология», 1967, № 8, с. 52—60); «Экономическая оценка природных ресурсов» (обзор статей, поступивших в редакцию), («Вопросы экономики», 1969, № 1] и др.).

¹⁵ Н. П. Федоренко, Об экономической оценке природных ресурсов («Вопросы экономики», 1968, № 3, с. 14—21); А. С. Астахов, նշվ. աշխ.: Э. А. Азроянц, նշվ. աշխ.: Բ. Ս. Սելվին աղյան, Արտադրական ռեսուրսների օգտագործման տնտեսական գնահատումը արդյունահանող արդյունաբերության մեջ, Երևան, 1979 և ուրիշներ:

հարաբերությունների պայմաններում, երբ բնական ռեսուրսներ օգտագործող ձեռնարկության աշխատանքը գնահատվում է շահույթի և շահութաբերության շուրջանիշներով, շատ դեպքերում դրանց նկատմամբ անտնտես օգտագործման վերաբերմունք է ծնվում¹⁶։

1930-ական թվականներին, երբ բնական ռեսուրսները մեր երկրում դիտվում էին որպես «բնության ձրի բարիք», անվճարելիության տեսակետը դարձավ տնտեսական հիմք՝ սոցիալիստական տնտեսվարման պայմաններում ռեսուրսների դրամական գնահատումից հրաժարվելու համար¹⁷։ Այդ կոնցեպցիայի հիմնավորման համար նրա կողմնակիցները վկայակոչում էին Կ. Մարքսի «բնության ձրի ուժեր» հայտնի արտահայտությունը։ Սակայն Կ. Մարքսը, ինչպես հայտնի է, այս դեպքում նկատի ունի միայն աշխատանքով չմիջնորդավորված բնական ռեսուրսները. «Իրը կարող է սպառարժեք լինել, առանց արժեք լինելու։ Այդպես լինում է այն դեպքում, երբ նրա օգտակարությունը մարդու համար միջնորդավորված չէ աշխատանքով։ Այդպես են օդը, կուսական հողը, բնական մարգագետինները, վայրի անտառը և այլն»¹⁸։

Ըստ Կ. Մարքսի, արտադրական շրջանառության մեջ չներգրավված և մարդկային աշխատանքով չմիջնորդավորված բնության ուժերը բնության շնորհ են։ Սակայն որոշակի հասարակական պայմաններում, անհրաժեշտության դեպքում, դրանք կարող են արտադրական շրջանառության մեջ ներգրավվել և այդ պատճառով պետք է հասարակության պոտենցիալ հարստություն դիտվեն։ Հետևապես, դրանք ունեն հասարակական սպառողական արժեք, պոտենցիալ արժույթ և պետք է քանակապես գնահատվեն. «Եթե բնության մի այնպիսի ուժ, որն սկզբնապես ոչինչ չարժեք, մասնակցում է արտադրությանը, — գրել է Կ. Մարքսը, — ապա նրա գինը որոշելու ժամանակ չի մշտնում հաշվի մեջ, քանի դեռ նրա օգնությամբ մատակարարված արդյունքը բավարարում է պահանջին։ Իսկ եթե զարգացման պրոցեսում ավելի շատ արդյունք է պահանջվում, քան կարող է պատրաստվել բնության այս ուժի օգնությամբ, ուրեմն, եթե այս լրացուցիչ արդյունքը պետք է արտադրվի առանց բնության այս ուժի օգնության կամ թե մարդկային գործակցության օժանդակությամբ, ապա մի նոր լրացուցիչ տարր կմտնի կապիտալի մեջ։ Հետևաբար, միևնույն արդյունքը ստանալու համար կապիտալի համեմատաբար ավելի մեծ ծախսումն է տեղի ունենում։ Մյուս բոլոր հանգամանքներն անփոփոխ ենթադրելով, տեղի է ունենում արտադրության թանկացում»¹⁹։

Այսպիսով, ռեսուրսների օգտագործման ժամանակ վճարելիության սկզբունքի կիրառումը կասկած չի հարուցում։ Ընդ որում, պետք է վճարումի լինեն ոչ միայն լավագույն և միջին տեղադիրք ու որակ ունեցող, այլև արտադրական շրջանառության մեջ ներգրավված համեմատաբար անբարենպաստ տեղադիրքով և ցածրորակ հանքահումքային ռեսուրսները։

Մեր երկրում հողը և նրա ընդերքը հասարակական սեփականություն են, ուստի նրանց օգտագործումը (ինչպես նաև ցանկացած տեսակի ռեսուրսի) հասարակության համար պետք է միջին շահույթ ապահովի։ Հետևաբար, հանքահումքային ռեսուրսների հայտնաբերված ու հետախուզված պաշարների օգտագործման դիմաց վճարի չափ (դին) սահմանելիս կարելի է ելնել կապիտալ ներդրումների արդյունավետության նորմատիվային գործակցի մեծությունից, հաշվի առնելով նաև հաշվարկված պաշարների հուսալիության աստիճանը (կատեգորիան)։

16 Т. Хачатуров, *նշվ. աշխ.*, էջ 66։

17 Օգտակար հանածոների օգտագործման համար վճարելիության սկզբունքը մեր երկրում հայտնի էր դեռևս 1923 թ., երբ մտցվեց «Երկրի ընդերքի և նրա օգտագործման մասին» կանոնադրությունը, որը 1930-ական թվականներին աստիճանաբար անտեսվեց (С. Я. Каганович, *նշվ. աշխ.*, էջ 156)։

18 Կ. Մարքս, *Կապիտալ*, հ. 1, գիրք 1, Երևան, 1954, էջ 42։

19 Կ. Մարքս, *Կապիտալ*, հ. 3, մաս 2, գիրք 3, Երևան, 1949, էջ 283։

Երկրաբանահետախուզությունում օգտակար հանածոյի որակի b նրա որոնման ու հետախուզման միջև ուղղակի կախվածություն գոյություն չունի: Ե. Սոլովյովայի կարծիքով, օգտակար հանածոյի հետախուզված պաշարի գնում նրա որակի հաշվի առնելը երկրաբանահետախուզական կազմակերպություններին անհավասար տնտեսական պայմանների մեջ կգնեն²⁰, նման տնտեսակետը մասնակիորեն ճիշտ կլիներ, եթե օգտակար հանածոյի բնական որակը բարձր լինելու շնորհիվ ստացվող լրացուցիչ ամբողջ եկամուտը (դիֆերենցիալ ռենտա 1-ը) մնար տվյալ երկրաբանահետախուզական կազմակերպության տնօրինությանը²¹, թանի որ օգտակար հանածոյի որակի բարձրացումը հանգեցնում է նրա օգտակարության (սպառողական արժեքի) և այդ ռեսուրսի արժույթի մեծացմանը, ապա ընդերքում դրա հետախուզված պաշարը գնահատելիս և գին սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև դիֆերենցիալ ռենտա 1-ը: Այսպիսով, նման մոտեցման դեպքում, մեր կարծիքով, ընդերքում օգտակար հանածոյի մեկ տոննա հետախուզված պաշարի գինը

(Գ հ. պ.) կարելի է որոշել հետևյալ կերպ. $Գ հ. պ. = 0 (1 + b_2) Գ + 0_1$

որտեղ 0_1 -ն ընդերքում օգտակար հանածոյի մեկ տոննա հետախուզված պաշարի որոնման ու հետախուզման հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի ծախսումներն են: Այն կարելի է որոշել այսպես. $0 = 0_1 + C_2$, որտեղ

0_1 -ն օգտակար հանածոյի մեկ տոննայի որոնման և հետախուզման միջին ճյուղալին ինքնարժեքն է, C_2 -ն երկրաբանահետախուզական կազմակերպության

նորմատիվային շահույթն է, $Գ$ -ն պաշարների հետախուզվածության աստիճանը հաշվի առնող գործակից է, 0_1 -ը այդ օգտակար հանածոյի մեկ տոննա հետախուզված պաշարից ստացվելիք դիֆերենցիալ ռենտա 1-ն է, C_2 -ը կապիտալ ներդրումների արդյունավետության նորմատիվային գործակիցն է:

Օգտակար հանածոյի հանքավայրի արժույթը ($Ա_2$) կարելի է որոշել այսպես՝ $Ա_2 = [0 (1 + b_2) Գ + 0_1] Գ$, որտեղ $Գ$ -ն օգտակար հանածոյի տեղվալ տեսակի հաշվեկշռային պաշարն է:

Հանքահումքային ռեսուրսների գնահատման երկրորդ փուլն ընդգրկում է ընդերքից արդյունահանված օգտակար հանածոյի տնտեսական գնահատումը և դրա գնի սահմանումը: Ինչպես նշվեց, արդյունահանող արդյունաբերության ճյուղերում օգտակար հանածոյի տվյալ տեսակի միավորի արդյունահանման ծախսերը տարբեր հանքավայրերում միատեսակ չեն. թվան ալնպիսի հանքարաններ, որոնց արդյունքը հազիվ է բավականանում աշխատանքը հաաուցելու ու նրանցում ներդրված կապիտալը, սովորական շահույթի հետ միասին, փոխհատուցելու համար²²:

Արդյունահանող արդյունաբերության ճյուղերի արտադրանքի նկատմամբ ժողովրդատնտեսական պահանջարկի ավելացումը և բնական լավագույն պայմաններում գտնվող հանքավայրերի սահմանափակվածությունը հասարակությանը ստիպում են շահագործել նաև հարաբերականորեն վատագույն տեղադիրք, ցածրորակ և աղքատիկ պաշարներ ունեցող հանքավայրերը: Դրա հետևանքով հարաբերականորեն ցածրորակ և անբարենպաստ տեղադիրք ունեցող հանքավայրերում արդյունահանող ձեռնարկությունների ծախսումները կլինեն հասարակականորեն անհրաժեշտ: Այդ ծախսերն էլ բնորոշում են օգտակար հանածոյի տվյալ տեսակը ժողովրդատնտեսական շրջանառությունում ներգրավվելու սահմանային թույլատրելի ծախսումների մակարդակը, այ-

²⁰ Е. А. Соловьева, նշվ. աշխ., էջ 44:

²¹ Դիֆերենցիալ ռենտա 1-ի բաշխման հարցին կանդիդատական հետազա շարադրանքում:

²² Կ. Մ. արք., Կապիտալ, հ. 3, մաս 2, էջ 312—313:

սինքն՝ դրանք սահմանային (եզրային) ծախսումներ են: Օգտակար հանածոյի այս կերպ որոշված եզրային և ամեն մի առանձին հանքավայրում արդյունահանման անհատական ծախսումների տարբերությունը կլինի ամբողջ դիֆերենցիալ ռենտան (1-ին և 2-րդ): Ամբողջ արդյունահանող արդյունաբերությունում գիտության և տեխնիկայի առաջընթացի հետ միասին ինչպես եզրային, այնպես էլ անհատական ծախսումները նվազում են, և դիֆերենցիալ ռենտայի մեծությունը, որպես հետևանք, մնում է գրեթե անփոփոխ: Առանձին հանքավայրերում բնահումքն արդյունահանելիս նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիայի կիրառումով նվազում են միայն անհատական ծախսումները: Արդյունաբերում՝ դիֆերենցիալ ռենտայի ծավալը մեծանում է (դիֆերենցիալ ռենտա 2-ի չափով):

Հանքահումքային ռեսուրսների տնտեսական գնահատման հարցերին նրվիրված հետազոտություններում տարածայնություններ կան ժամանակի գործոնը հաշվի առնելու վերաբերյալ: Մեզ ճշմարտամոտ են թվում այն հեղինակները, ովքեր գտնում են, որ ռեսուրսների տնտեսական գնահատման դեպքում ժամանակի գործոնը հաշվի առնելիս գնահատվող մեծությունը արհեստականորեն կվաճի²³, Այսպիսով, արդյունահանված մեկ տոննա հանքահումքի գինը (Գ_{հ.հ.}) կարելի է սահմանել եզրային ծախսումների մակար-

դակին համապատասխան. $G_{\text{հ.հ.}} = C_{\text{հ.հ.}} + C_{\text{ը}}$, որտեղ $C_{\text{ը}}$ -ը եզրային ծախսումների մակարդակը պայմանավորող ձեռնարկությունում արդյունահանված մեկ տոննա բնահումքի լրիվ ինքնարժեքն է, որի մեջ մտցված է նաև բնահումքի օգտագործման վճարը՝ հաշվարկված ընդերքում օգտակար հանածոյի մեկ տոննա հետախուզված պաշարի համար սահմանված գնի միջոցով (որով երկրաբանահետախուզական կազմակերպությունը այն կվաճառի արդյունահանող

ձեռնարկության): $C_{\text{ը}}$ արդյունահանված հումքի իրացումից ստացված ընդհանուր շահույթն է: Օգտակար հանածոների ռացիոնալ օգտագործումը խթանելու նպատակով պետության, երկրաբանահետախուզական կազմակերպությունների և արդյունահանող ձեռնարկությունների միջև տնտեսաշարժարկային հարաբերությունները կարգավորելիս հարկավոր է ընդհանուր շահույթը բաշխել դրանց միջև: Այնքանով, որքանով մեր երկրում հողը և նրա ընդերքը հասարակական սեփականություն են, անկախ արդյունահանված բնահումքի որակից, հարկավոր է պետությանը վճարել ընդերքն օգտագործելու, շահագործելու համար: Վճարի չափը որոշելիս կարելի է նկատի առնել ներդրումների արդյունավետության նորմատիվային մակարդակից (ներկայումս այն հավասար է 0, 12-ի): Ուստի, բնահումքի օգտագործման վճարը պետք է կազմի ընդհանուր շահույթի 12%-ը:

Դիֆերենցիալ ռենտա 1-ը շահագործվող վատագույն որակ և տեղադիրք ունեցող հանքավայրերի և յուրաքանչյուր անհատական հանքավայրերում կատարվող ծախսումների տարբերությունն է: Ըստ էության, արտադրության միջոցների հասարակական սեփականության պայմաններում այն յուրացնելու մենաշնորհը պետք է ամբողջովին տրվի պետությանը: Սակայն բարձրորակ ռեսուրսներ որոնելու և հետախուզելու, ինչպես նաև ընդերքի ռացիոնալ օգտագործումը խթանելու համար պետք է դիֆերենցիալ ռենտայի որոշ մասը թողնել երկրաբանահետախուզական կազմակերպությունների և արդյունահանող ձեռնարկությունների տնօրինությանը: Կարծում ենք, որ դրանց տնօրինությանը պետք է թողնել 12-ական % արդյունավետության նորմատիվին համապատասխան, իսկ 76%-ը՝ փոխանցել պետությանը:

²³ Е. А. Козловский, Минерально-сырьевая база и фактор времени («Советская геология», 1979, № 3, с. 9—22); А. Я. Кац, Метод учета фактора времени при разработке кондиций на минеральное сырье («Советская геология», 1979, № 3, с. 12—18); Н. Фейтельман, Экономическая оценка природных ресурсов («Вопросы экономики», 1982, № 10, с. 63—73) и др.

Եթե դիֆերենցիալ ռենտա 1-ը բնության «աշխատանքի» արգասիքն է, ապա դիֆերենցիալ ռենտա 2-ը՝ հասարակության և արդյունահանող յուրաքանչյուր ձեռնարկության կոլեկտիվի: Ուստի, դիֆերենցիալ ռենտա 2-ը պետք է բաշխվի պետության և արդյունահանող ձեռնարկությունների միջև՝ դրանց մասնակցությանը համապատասխան: Այնքանով, որքանով մեր երկրում գոյություն չունի տեխնիկական գաղտնիք, և պետությունը տեխնիկական ու տեխնոլոգիական մոնոպոլիստները անվճար տրամադրում է արդյունահանող ձեռնարկություններին, նա ևս իրավունք ունի տնօրինելու դիֆերենցիալ ռենտա 2-ի որոշ մասը: Մեր կարծիքով, ստացված դիֆերենցիալ ռենտա 2-ի 15%-ը (նոր տեխնիկայի արդյունավետության նորմատիվին համապատասխան) հանրակամ է փոխանցել պետական բյուջե, իսկ մնացածը թողնել արդյունահանող ձեռնարկության տնօրինությանը: Բացի վերոհիշյալ հավելումներից, երկրորդանհատարտուղական կազմակերպությունները և արդյունահանող ձեռնարկությունները հանքահումքի իրացումից (հետախուզված պաշարի և արդյունահանված հումքի ձևով) կստանան նորմատիվային շահույթ:

Այսպիսով, արտադրողական ուժերի զարգացման արգի փոխում հանքահումքի ռացիոնալ օգտագործումը խթանելու համար առանձնահատուկ նշանակություն է ստանում տնտեսական մեխանիզմի կարևորագույն լծակների՝ տնտեսական գնահատման, գնի սահմանման, շահույթի բաշխման և այլնի կատարելագործումը:

ЭКОНОМИЧЕСКОЕ СТИМУЛИРОВАНИЕ РАЦИОНАЛЬНОГО ИСПОЛЬЗОВАНИЯ МИНЕРАЛЬНОГО СЫРЬЯ

МИКАЕЛ МИКАЕЛЯН

Р е з ю м е

В современных условиях бережное и рациональное использование минерально-сырьевых ресурсов приобретает особо важное народнохозяйственное значение. Успешное решение этой проблемы невозможно без дальнейшего совершенствования экономического механизма управления недропользованием. В этом механизме важную роль должна сыграть экономическая оценка минерально-сырьевых ресурсов, ценообразование, платность использованных разведанных запасов и т. д.

Экономическую оценку зависимости минерально-сырьевых ресурсов от степени их промышленного освоения следует разделить на два этапа: экономическая оценка полезных ископаемых в недрах на стадии подготовки их месторождений к промышленному освоению после детальной разведки и подсчета запасов, на основе которой можно установить цену на разведанные запасы в недрах, и экономическая оценка добытых полезных ископаемых, на основе которой можно установить цену на добываемое сырье.

При экономической оценке и установлении цен на разведанные запасы в недрах следует учитывать общественно необходимые затраты на поиски и разведку единицы запасов, степень разведанности запасов и дифференциальную ренту 1. Цену на добываемое сырье можно установить на уровне общественно-необходимых затрат на добычу этого сырья.

Для стимулирования рационального использования минерального сырья следует прибыль от реализации добываемого сырья распределять между государством, геологоразведочными организациями и добывающими предприятиями, исходя из их хозяйственных интересов.